9(91.542-2)
П-29

2006

12891

# ԲԱՆ

Ի մէջ տաճարին քաջակառոյց Ամրոցին Երևանայ 'ի ներկայութեան Սրբազնակատար Ծայրագոյն Պատրիարքի ամ. Հայոց Տեառն ԵՓՐԵՄԻ և առաջի բազմախումբ ժողովրդեան

Ասացեալ յԱւագ Բահանայից Հայոց 'ի Միջնորդեալ Պահապանաց յԱւագ Եկեղեցւոջ Սրբոյ Աստուածածնին 'ի Հոկտեմբերի 9 ամի 1827 'ի Տեառն.

Տպագրեալ Հրամանաւ Աստուածապատիւ Օծութեան Տեառն ԵՓՐԵՄԻ Վեհափառ կաթուղիկոսի ամենայն Հայոց.

Ի Տպարանի Ուսումնարանի Հայոց ընծայելոյ յԱզնուական Գէորգայ Արծրունւոյ.

1828 ՏՓԽԻՍ ՌՄՀԷ.

9(91.542-2)
2-29 Կ.



# ԲԱՆ

## Դիւր առման քաջակառոյց Ամրոցին Երեւանայ .

1006
29732

Բարեպաշտօն ունկնդրացդ ժողովելոց 'ի ծոց Մօր մերոյ Սրբոյ Եկեղեցւոյ յայտարարութիւն լիցի .

Վայել է զարդիս՝ յիշեցուցանել ձեզ զփառաբանական գոհաբանութիւն Սրբազան Մարգարէին Դաւթի՝ առ Աստուած, զոր երգէ ցնծալից հոգւով. Օրհնեալ Տէր Աստուած իմ Սաղմ. որ ուսոյց զձեռս իմ 'ի պատերազմ եւ զմատունս իմ 'ի ճակատամարտ։ ճխգ. 1.

Վասն այսր Դաւիթ, Գոհանամ զԱստուծոյ իմմէ եւ օրհնեմ զնա, զի ետ ինձ զզօրութիւն քաջութեամբ պատերազմելոյ, եւ զօրացոյց զձեռս իմ եւ զմատունս անվրէպ յաղթելոյ։ Արժան է աստ քննել, զի ոչ ասաց Մարգարէն, զօրացոյց զձեռս իմ եւ զմատունս. այլ ուսոյց, վա՞ն զի՝ ոչ թէ սոսկ զօրութ՛ միայն պատերազմի, այլ եւ՝ իմաստութ՛, եւ այս անտի է յայտ, զի ճանաչէր թէ ինքն Աստուծով գործէ զամ՛, եւ նովաւ առաջնորդի 'ի մարտ. որպէս եւ յայլում տեղւոջ ասէ. Զօրացուցեր ինձ զօ. Սաղմ. զօրութեամբ 'ի պատերազմի. կաշկանդեցեր 'ի վերայ իմ, ներքոյ իմ տարաբերս։ ժէ. 40.

Իսկ արդ՝ զի որպէս 'ի հնումն զԴաւիթ, նոյնպէս եւ 'ի նորումս զՕգոստափառ զԿայսրն մեր զՆԻԿՈՂԱՅՈՍ մինչ եօծն Աստուած, եւ բարձրացոյց յԱթոռ Ինքնակալութեան Ամենայն Ռուսաց, իսկ եւ իսկ վաղվաղակի ուսոյց զձեռս Նորին 'ի պատերազմ եւ զմատունս 'ի ճակատամարտ ընդդէմ բարբարոս ազգին Պարսից, որք վստահացան եղծանել զԴաշն խաղաղութ՛.

Արդարեւ՝ մեծապէս յիմարեցաւ Թշնամին եւ մոլորեցաւ, զի ոչ զգաց զահաւոր զօրութիւն Ինքնակալ Մեծի Կայսերն Ամ՛ Ռուսաց ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Առաջնոյ, եւ վարեցաւ ընդ դեռահասակ Տէրութեան, ոչ ըստ օրինի Թա-

գա-

գաւորաց, այլ զօրէն պայպատակիչ դողոց և աւազակաց: Տեսէք այժմ բարեպաշտօն ունկնդիրք, թէ անպարտելի սուր Խա-չազգեաց զօրացն Ռուսաց, յո՞ր աստիճան թշուառութեան էած զտունն Պարսից, զի համարեա թէ՝ մին սոցա զհազարս հա-լածեաց և երկուք զբիւրս:

Ո՛չ ապաքէն նոքա յուսացեալ յամրութիւս և յանառիկ լինել դղեկաց իւրեանց, Աբասապատու, Սարդարապատու, և առաւել քան զամենեսին անմատչելի կարծեցեալ ամրոցին Ե-րևանու, և պանծային ունել զայնոսիկ իբրու զբաբելոնեանն աշտարակ: Հայեցարո՛ւք այժմ՝ թէ ՚ի խոհեմ և ՚ի զգօն կա-ռավարութէ Ամենաքաջ Օգոստափառ Նորին Բարձր Գերազան-ցութեան բարեբարոյ Կուսակալին կողմանցս, որպէս լքան ՚ի համայն զօրութենց, և իբրու նկուն ինչ խրճիթ ընկճեցան և խոնարհեցան ՚ի հպատակութիւն Ամենափայլ Դրօշակի Ամե-նամեծ Տէրութեանն Ռուսաց: Քանի՞ երևելի Խանք կալանա-ւորեցան, և քանի՞ բազմաթիւ զօրք Պարսից մատնեցան ՚ի ձեռս զօրաց մերոց: Օրհնեալ Ած է՝ որ ուսոյց զձեռս Օծելոյն իւրոյ ՚ի պատերազմ. որպէս զի՝ ՚ի բազում ամաց հետէ ողբացեալ Ազգն Հայոց զերծցի միանգամայն ՚ի ժանեաց առիւծուց բար-բարոսաց. Նորոգեսցի ամայացեալ Տաճարն Սուրբ ԷՋՄԻ-ԱԾՆԻ, և լիցի վերստին դարձ Սրբազնակատար Պատրի-արգի ամ Հայոց ՚ի պատրիարգականն իւր Գահ:

Քանզի տաճարն այն Սբ, որ մինչև ցարդ իբր այրի մի-մենացեալ՝ ողբս առեալ կոծէր ընդ զրկումն յամենասիրելի փեսայէդ, աւա՜ ժամ ուրախութ և մխիթարութ գտեալ՝ ձայնէ
Երգ. ՚ի հեռաստանէ ասելով. Արի եկ մերձաւոր իմ. գեղեցիկ իմ, եկ ընդ
Է. 13. հովանեաւ վիմին մերձ առ նախապարիսպն, ցոյց ինձ զտեսիլ քո, և լսելի արա ինձ զձայն քո, զի ձայն քո քաղցր է, և տեսիլ քո գեղեցիկ:

Արի եկ մերձաւոր իմ. զի հզօր և սքանչելագործ Ած Ամենաբարեպաշտ Կայսերն ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչի եբաց զփակեալ Դուռն Տաճարիս, և եբարձ զնախատինս և զարհա-մարհանս երեսաց իմոց, զորս կրէի մինչև ցարդ՝ ՚ի հեթանոսաց, աւա՜ տարագրեալ մանկունք իմ գան հեռաստանէ, և ժողովին ՚ի մայրենի ծոց իմ, և ժողովուրդ որ նստէր ՚ի խաւարի, ետես զլոյս մեծ:

Արի եկ գեղեցիկ իմ, զի գեղեցկացան աղօթք քո և

ար-

արտասուք առաջի Ամենաբարձրելոյն Ա.Ծ.՝ որ պահպանեաց զկեանս քոյ անմերձ 'ի մահուանէ զօրէն Ծերունւոյն Սի-մէօնի, զի տեսցես զայս զօր լուսեղէն և զօր երջանիկ՝ զոր 'ի նախորդաց քոց բազումք ցանկացան տեսանել, և ոչ տեսին։

Արդ եկ ով սիրելի փեսայ իմ, զի ահա սիրասնունդ զա-ւակն իմ մեծիմաստ Բարձր Սրբազան Արք եպ'ն Ներսէս հակէ-ասա 'ի ջերմեռանդն աղօթս առաջի կոչամուխ Գեղարդեանն Տ'ն, ոչ երբէք խնայէ 'ի կեանս իւր 'ի սէր հաւատարմութեան Ռուսաց, և պատրաստէ ձեզ տեղի։

Այո և դուք, ով բարեպաշտօն ունկնդիրք եկայք նախ մատուսցուք ծնրադրական երկրպագութիւն զփառս և զգոհու-թիւնս Ամենաբարձրելոյն Աստուծոյ, ասելով ընդ երից մանկանց. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան. և ապա կանխեսցուք 'ի ջերմեռանդագոյն աղօթս Դան. Գ. 26.
վասն երկարութ անդէն կենաց Ամենաբարեպաշտ և Օգոստա-փառ Կայսերն և նոր Արքայի մերոյ ՆԻԿՈԼԱՅ Պաւ-լովիչի. և սակս յաղթութեան Զօրապետաց և համօրէն Զօրաց ՆՈՐԻՆ յայսմհետէ մինչև յաւիտեան։

...ՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
...ичная Библиотека
7/XI 1922
...ԳՐԱԴԱՐԱՆ